DIMENSION
INVESTMENTS

«ԴԱՅՄԵՆՇՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Երևան-2021

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2, շենք 27/1

«31» մարտ 2021թ.

Հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄ		01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	28,774	28,774	31,012	31,012
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(13,951)	(13,951)	(14,643)	(14,643)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**14,823**	**14,823**	**16,369**	**16,369**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	11,620	11,620	1,808	1,808
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(4,738)	(4,738)	(1,060)	(1,060)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**6,882**	**6,882**	**748**	**748**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	1,704	1,704	(4,742)	(4,742)
Այլ գործառնական եկամուտներ	6	1	1	(40)	(40)
Գործառնական եկամուտներ		**23,410**	**23,410**	**12,335**	**12,335**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(1,737)	(1,737)	2,874	2,874
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(10,765)	(10,765)	(11,951)	(11,951)
Այլ գործառնական ծախսեր	9	(2,288)	(2,288)	(1,597)	(1,597)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		**8,620**	**8,620**	**1,661**	**1,661**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	10	(1,417)	(1,417)	(8,030)	(8,030)
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)		**7,203**	**7,203**	**(6,369)**	**(6,369)**
Այդ թվում՝		-	-	-	-
Մայր կազմակերպության բաժնեմաս		-	-	-	-
Չվերահսկվող բաժնեմաս		-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
«Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	24	11,638	11,638	(1,400)	(1,400)
Այլ համապարփակ եկամուտների վերադասակարգում շահույթին կամ վնասին	24	(28)	(28)	-	-
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	24	(1,790)	(1,790)	11,640	11,640
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**9,820**	**9,820**	**10,240**	**10,240**
Համապարփակ ֆինանսական արդյունք		**17,023**	**17,023**	**3,871**	**3,871**
Այդ թվում՝		-	-	-	-
Մայր կազմակերպության բաժնեմաս		-	-	-	-
Չվերահսկվող բաժնեմաս		-	-	-	-
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	11	0.182	0.182	(0.161)	(0.161)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	11	0.182	0.182	(0.161)	(0.161)

Միքայել Մարգարյան
Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական վիճակի մասին
«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2, շենք 27/1

«31» մարտ 2021թ.

Հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄ		առ 31.03.2021	առ 31.12.2020
Ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12	41,222	26,831
Պահանջներ հաճախորդների նկատմամաբ	13	9,351	3,638
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	14	1,323,434	973,910
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ	15	146,059	142,359
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	16	-	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	17	14,979	16,753
Հետաձգված հարկային ակտիվներ	10	851	2,340
Այլ ակտիվներ	18	1,418	375
Ընդամենը՝ ակտիվներ		**1,537,314**	**1,166,206**
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամաբ	19	990,867	635,721
Պարտավորությունների հաճախորդների նկատմամբ	20	488	275
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	-	-
Պահուստներ	21	1,762	1,917
Այլ պարտավորություններ	22	29,369	30,517
Ընդամենը՝ պարտավորություններ		**1,022,486**	**668,430**
Սեփական կապիտալ	32		
Կանոնադրական կապիտալ		395,840	395,840
Էմիսիոն եկամուտ		8,346	8,346
Գլխավոր պահուստ		212	212
Չբաշխված շահույթ (վնաս)		99,128	91,942
Սեփական կապիտալի այլ տարրեր		11,302	1,436
Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
Փոքրամասնության բաժնեմաս			
Ընդամենը՝ սեփական կապիտալ		514,828	497,776
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**1,537,314**	**1,166,206**

Միքայել Մարգարյան
Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
«ԴԱՅՄԵՆՇ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2, շենք 27/1
«31» մարտ 2021թ.

Հազար ՀՀ դրամ *Սեփական կապիտալի տարրերի անվանումը*	Կանոնադրական կապիտալի գրանցված գումար	Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ/վնաս	Միջանկյալ հաշվետվությունների վերանայման	Սեփական կապիտալի այլ մուտքերի մնացորդ	Նախորդ տարվա բաժնեմասերի	Ընդամենը կապիտալի գումար
Նախորդ համադրելի միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)								
Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2020թ.	**320,000**			**275**		**(127)**		**320,148**
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով, այդ թվում՝	36,200							
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	36,200							**36,200**
Համապարփակ եկամուտ				(5,518)				**(5,518)**
Այլ համապարփակ եկամուտ						3,557		**3,557**
Ներքին շարժեր, այդ թվում՝								
Մասհանումներ գլխավոր պահուստին								
Այլ համապարփակ եկամուտների վերադասակարգում շահույթին կամ վնասին								
Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2020թ.	**356,200**			**(5,243)**		**3,430**		**354,387**
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)								
Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2021թ.	**395,840**	**8,346**	**212**	**91,942**	**-**	**1,436**	**-**	**497,776**
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	**-**
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-	-	-	-	-	**-**
Համապարփակ եկամուտ	-	-	-	7,203	-	-	-	**7,203**
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	9,849		**9,849**
Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	(17)	-	17	-	**-**
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	-	-	-	**-**
Այլ համապարփակ եկամուտների վերադասակարգում շահույթին կամ վնասին	-	-	-	(17)	-	17	-	**-**
Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2021թ.	**395,840**	**-**	**212**	**99,128**	**-**	**11,302**	**-**	**514,828**

Միքայել Մարգարյան
Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
(ուղղակի մեթոդ)
«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2, շենք 27/1

«31» մարտ 2021թ.

Հազար ՀՀ դրամ		
ԱՆՎԱՆՈՒՄ	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված տոկոսներ	7,530	7,417
Վճարված տոկոսներ	(12,637)	(14,746)
Ստացված կոմիսիոն գումարներ	4,510	1,540
Վճարված կոմիսիոն գումարներ	(4,393)	(4,369)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(6,916)	(7,396)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(4,751)	(3,445)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	(16,657)	(20,999)
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում), այդ թվում՝	(319,631)	653,995
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» և «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)	(319,631)	653,995
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**(336,288)**	**632,996**
Վճարված շահութահարկ	(666)	(19)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**(336,954)**	**632,977**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)	-	(1,000)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում / կապիտալացում	(513)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	200
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	**(513)**	**(800)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	352,895	(679,178)
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում	-	47,986
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի վճարում	(1,485)	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	**351,410**	**(631,192)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	448	159
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	13,943	1,144
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	26,831	12,449
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**41,222**	**13,593**

Միքայել Մարգարյան
Գլխավոր տնօրեն

Արմեն Ազիզյան
«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

14 ապրիլ 2021թ.

Համախմբված միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում

«Դայմենշն» ՓԲԸ-ն ստեղծվել է 2018 թվականին: 2018թ. սեպտեմբերի 28-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել է իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման թիվ 0014 լիցենզիան: 2020 թվականին Ընկերությունը ձեռք է բերել «Դայմենշն Ֆանդզ Մենեջմենթ» ՍՊ Ընկերության փայամասնակցությունների ամբողջական ծավալը: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն բաժնետերերի ընդհանուր ժողովն է, իսկ գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Խորհուրդը: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Միքայել Մարգարյանը: Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ: Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեությունը ենթարկվում է արտաքին աուդիտի: Արտաքին աուդիտորի ընտրությունը և վարձատրության չափը որոշվում է մրցութային կարգով:

Կարգավորման միջավայրը

Կարգավորող մարմինները բազմաթիվ ձևերով վերահսկում են Ընկերության գործունեությունը, և կարող են իրականացնել կանոնավոր ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Այս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառույթները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և շարքային աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ-ում, հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող ընկերությունների համար:
Ընկերության ակտիվները հիմնված են ՀՀ-ում: Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթարկվում զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրների շուկաները: Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվացյալ ֆինանսական խնդիրները կամ զարգացող տնտեսությամբ երկրներում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի ներդրումային միջավայրի և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Ընկերության ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, արժեթղթերի շուկայում, կանոնադրական դաշտում և աշխարհաքաղաքական այլ փոփոխությունները, որոնք բոլորն էլ դեր ունեն ակտիվների գնահատման, թրեյդինգային գործունեության, տոկոսադրույքների, ներդրողների ընդհանուր տրամադրվածության նկատմամբ, և դուրս են Ընկերության վերահսկողությունից:
Կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատումներից: Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է ունենան փողերի լվացման կանխարգելման քաղաքականություններ, իրականացնեն աշխատակիցների հատուկ վերապատրաստման դասընթացներ, նշանակեն փողերի լվացման և կանխարգելման համար պատասխանատու աշխատակցի: Ավելին, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում
կանոնակարգային գործառույթները ողջ աշխարհում շարունակաբար զարգանում են և պայմանավորված են հիմնականում տեխնոլոգիաների զարգացմամբ, և որպես արդյունք՝ տեղեկատվության արագ տարածման հնարավորություններով: Ընկերության հանդեպ կիրառելիության շրջանակներում պետք է ապահովվի համապատասխանություն այդ կանոնակարգային պահանջների հետ:

Ղեկավարության կողմից սահմանվել են քաղաքականություններ և ընթացակարգեր՝ այդ կանոնակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:
Ընկերության բաժնետերերն են Դավիթ Հակոբյանը, Կարել Խրիս Հոֆստրայը, որոնք միաժամանակ հանդիսանում են նշանակալից մասնակիցներ և Արմեն Գրիգորյանը:
Ընկերության Խորհրդի կազմը հետևյալն է.

- Դավիթ Հակոբյան - Խորհրդի նախագահ
- Կարել Խրիս Հոֆստրա - Խորհրդի անդամ
- Էդգար Համբարյան - Խորհրդի անդամ

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2021թ.ապրիլի 14-ին:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

2.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Ընկերության կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած դեպքերի և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.6 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

բ) Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:
Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:
Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:
Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, այլևս վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, եթե դասակարգված են որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:
Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը որոշվում է հիմնվելով երկու ստորև բերվածների վրա՝

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդել
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի բնութագրեր

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

ՖՀՄՍ 9 շրջանակներում բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները պետք է հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով, հիմք ընդունելով կազմակերպության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը և ֆինանսական ակտիվների դրամական հոսքերի բնութագրերը:
Մասնավորապես՝

• Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

• Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է ոչ միայն հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այլև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով:

• Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով.

Պարտքային գործիքներ՝ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող

Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հատկանիշները և ակտիվի կառավարման մասով Ընկերության բիզնես մոդելը:

Ամորտիզացված արժեքով դասակարգվող ակտիվների պայմանագրային պայմանները պետք է առաջացնեն դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (ՄՄԳՏՎ):

ՄՄԳՏՎ թեստի նպատակներով, մայր գումար է հանդիսանում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ: Մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում (եթե առկա են մայր գումարի մարումներ): Տոկոսն իրենից ներկայացնում է հատուցումներ ժամանակի մեջ դրամի արժեքի մասով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի գծով վարկային ռիսկի և այլ հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի, ինչպես նաև շահույթի սահմանաչափի մասով: ՄՄԳՏՎ գնահատումը իրականացվում է այն արժույթով, որով արտահայտվում է ֆինանսական ակտիվը:

Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, համապատասխանում են հիմնական պարտքային համաձայնությանը: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված այն դրամական հոսքերի ռիսկերի կամ անկայունության ենթարկվածությունը, որոնք չեն վերաբերվում հիմնական պարտքային համաձայնությանը, ինչպիսիք են բաժնետոմսերի կամ ապրանքների գների փոփոխության ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական պարտքային համաձայնագիր, անկախ այն բանից, որ այն հանդիսանում է վարկ իր իրավական ձևով:

Ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով: Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ հիմունքներով բոլոր այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք առկա են եղել ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Ընկերությունը որոշում է բիզնես մոդելների մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտիվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրականացման համար:

Ընկերության բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի մասով ղեկավարության մտադրություններից, հետևաբար, բիզնես մոդելի գնահատումը իրականացվում է՝ հիմք ընդունելով ավելի բարձր մակարդակի համախմբման, այլ ոչ անհատապես դիտարկման սկզբունքը: Ընկերությունն ունի մեկ բիզնես մոդել ֆինանսական գործիքների կառավարման մասով, որն արտացոլում է Ընկերության՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Ընկերության բիզնես մոդելները որոշում են, արդյոք դրամական միջոցները առաջանում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից:

Բիզնես մոդելի գնահատման ընթացքում Ընկերությունը հաշվի է առնում հասանելի համապատասխան ողջ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այս գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Ընկերությունը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները:

Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ հասանելի ողջ տեղեկատվությունը՝

- Ինչպես է գնահատվում և ներկայացվում կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին բիզնես մոդելի և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների գործունեության արդյունքները,
- Այն ռիսկերը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների) գործունեության արդյունքների վրա, և մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մոդելները, և
- Ինչպես են բիզնես կառավարիչները վարձատրություն ստանում (արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքի, թե հավաքագրված պայմանագրային դրամական հոսքերի վրա):

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը որոշում է, արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են արդեն առկա բիզնես մոդելի մաս կամ արդյոք արտացոլում են նոր բիզնես մոդելի սկիզբը: Ընկերությունը վերագնահատում է իր բիզնես մոդելները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում, որոշելու համար, արդյոք բիզնես մոդելները փոփոխություններ են կրել նախորդ ժամանակաշրջանից ի վեր: Ընթացիկ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը բիզնես մոդելներում փոփոխություններ չի հայտնաբերել:

Այն դեպքում, երբ արտաքին գործիքը, որը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, ապաճանաչվում է, ապա կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում: Եվ, հակառակը, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային գործիքների կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ տեղաշարժվում է սեփական կապիտալում:

Պարտքային գործիքները, որոնք հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, ենթակա են արժեզրկման:

Վերադասակարգում

Այն դեպքում, երբ բիզնես մոդելը, որի շրջանակներում Ընկերությունը պահում է ֆինանսական ակտիվներ, փոփոխվում է, ապա այդ փոփոխված ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են: Նոր կատեգորիային վերաբերող դասակարգման և չափման պահանջները կիրառվում են հեռանկարային հիմունքներով առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվանից, բիզնես մոդելի փոփոխությունից հետո, ինչը հանգեցրել է Ընկերության ֆինանսական ակտիվների վերադասակարգմանը:

Արժեզրկում

Ակնկալվող վարկային կորուստները (ԱՊԿ) պետք է չափվեն կորուստների գծով պահուստի հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Ակնկալվող պարտքային կորուստները 12 ամիսների ընթացքում. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքից ակնկալվող, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի պարտազանցման դեպքերի, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Ամբողջական ակնկալվող պարտքային կորուստներ. Ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքում, այսինքն՝ կորուստներ, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր պարտազանցման դեպքերի (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Ամբողջական ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի հաշվառում է պահանջվում, եթե այդ ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱԿ-ները չափվում են 12-ամսյա ԱԿ-ի չափով:

Ակնկալվող վարկային կորուստները՝ ԱՊԿ-ները վարկային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներ են: Դրանք չափվում են Ընկերության պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որն Ընկերությունն ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում՝զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

Միևնույն տնտեսական ռիսկի հատկանիշներ ունեցող պորտֆելների դեպքում Ընկերությունը ԱՊԿ-ն կչափի հավաքական հիմունքով: Կորուստների գծով պահուստների գնահատումը կհիմնվի ակտիվների ակնկալվող դրամական հոսքերի ներկա արժեքի վրա՝ կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտազանցման սահմանումը

ԱՊԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել պարտազանցումը: Վերջինիս սահմանումը օգտագործվում է ԱՊԿ-ի չափը և կորուստների գծով պահուստները 12-ամսյա կամ ամբողջական ԱՊԿ-ի վրա հիմնված լինելը որոշելու համար, քանի որ դեֆոլտը՝ դեֆոլտի հնարավորության (ԴՀ) բաղադրիչ է, որն ազդում է ԱՊԿ-ի գնահատման, ինչպես նաև վարկային ռիսկի զգալի աճի հայտնաբերման վրա: Ընկերությունը ստորև նշված հանգամանքների դեպքում արձանագրում է պարտազանցում.

- Երբ փոխառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց ցանկացած էական պարտավորություն Ընկերությանը, կամ

- Հավանական է, որ փոխառուն ամբողջությամբ չի վճարի իր պարտավորությունները

Պարտազանցման սահմանումը համապատասխանեցվում է տարբեր տեսակի ակտիվների տարբեր առանձնահատկություններն արտացոլելու նպատակով:

Փոխառուի՝ իր պարտքային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման նպատակով Ընկերությունը հաշվի է առնում միայն քանակական տեղեկատվությունը: Քանակական տեղեկատվությունը ներառում է նույն փոխառուի այլ պարտավորությունների չկատարման կամ վճարի ուշացման մասին տվյալներ, որոնք այս վերլուծության կարևոր մասն են հանդիսանում:

Ընկերությունը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները, դրանց սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի հնարավոր աճը գնահատելու նպատակով: Պարտքային ռիսկի նշանակալի աճի դեպքում Ընկերությունը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով պարտքի գործողության ողջ ընթացքի համար հաշվարկվող ԱՊԿ-ի վրա, այլ ոչ 12-ամսյա ԱՊԿ-ի վրա:

Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Ընկերությունը համեմատում է հետևյալը՝ ֆինանսական գործիքի դեֆոլտի ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հիմնված գործիքի գծով մարման մնացորդային պարտավորության վրա, և ֆինանսական գործիքի տեղի ունեցած դեֆոլտի ռիսկը, որն ակնկալվում էր մնացորդային պարտավորության մարման գծով՝ գործիքի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ: Այս գնահատումը կատարելիս Ընկերությունը հաշվի կառնի միայն քանակական տեղեկությունները:

Ֆինանսական ակտիվների վերափոխումը և ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվների վերափոխումները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ֆինանսական ակտիվի փոփոխման դեպքում Ընկերությունը գնահատում է, արդյոք այս փոփոխության արդյունքում առաջանում է ապաճանաչում: Ընկերության քաղաքականության համաձայն, փոփոխությունների արդյունքում առաջանում է ապաճանաչում, երբ այդ փոփոխությունը հանգեցնում է էապես տարբերվող այլ պայմանագրային պայմանների առաջացմանը: Որոշելու համար, արդյոք փոփոխված պայմանները էապես տարբերվում են սկզբնական պայմանագրային պայմաններից, Ընկերությունը հաշվի է առնում հետևյալը՝

- Որակական գործոններ, ինչպիսիք են այն պայմանագրային դրամական հոսքերը, որոնք փոփոխությունից հետո չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, փոխարժեքի կամ պայմանագրային կողմի փոփոխությունը, տոկոսադրույքների, ժամկետայնության, պայմանագրային դրույթների փոփոխությունը:

Եթե այս փոփոխությունները չեն պարզաբանում էական փոփոխությունները, ապա՝

- Իրականացվում է քանակական գնահատում՝ համեմատելով սկզբնական պայմաններով մնացյալ պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեքը և վերանայված պայմաններով պայմանագրային դրամական հոսքերը: Այդ գումարները զեղչվում են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե ներկա արժեքի տարբերությունը 10 տոկոսից ավել է, ապա Ընկերությունը որոշում է, որ առկա է պայմանագրի նշանակալի տարբերություն, ինչը հանգեցնում է ապաճանաչման:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ԱՊԿ գծով պահուստները չափվում են ապաճանաչման օրվա դրությամբ՝ ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը այդ օրվա դրությամբ որոշելու նպատակով: Վերանայված հաշվեկշռային արժեքի և նոր պայմաններով նոր ֆինանսական ակտիվի իրական արժեքի միջև տարբերությունը առաջացնում է ապաճանաչման մասով օգուտ կամ վնաս: Նոր ֆինանսական ակտիվը կունենա 12-ամսյա ԱՊԿ-ի հիմունքներով չափվող կորուստների գծով պահուստ, բացառությամբ այն դեպքերի, երբ նոր վարկը կհամարվի արժեզրկված առաջացման պահին: Սա կիրառվում է միայն այն դեպքում, երբ նոր վարկի իրական արժեքը ճանաչվում է իր վերանայված անվանական արժեքի նշանակալի զեղչով, քանի որ դեռ առկա է դեֆոլտի ռիսկը, ինչը
փոփոխությունների արդյունքում չի նվազել: Ընկերությունը վերահսկում է փոփոխված ֆինանսական ակտիվների վարկային ռիսկը՝ գնահատելով որակական և քանակական տեղեկատվությունը (օր.՝ արդյոք փոխառուն ունի ժամկետանց օրեր նոր պայմանների պարագայում):
Երբ ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները փոփոխվում են, ինչը ապաճանաչման չի հանգեցնում, Ընկերությունը որոշում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, համեմատելով՝

- Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ և սկզբնական պայմանագրային պայմաններով գնահատված ամբողջական ԴՀ-ն, և
- Փոփոխված պայմանագրային պայմաններով, հաշվետու ամսաթվի դրությամբ ամբողջական ԴՀ-ն:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ պարտքային պայմանների վերանայման քաղաքականության շրջանակներում փոփոխված ֆինանսական ակտիվներին, երբ այդ փոփոխության արդյունքում ապաճանաչում չի առաջացել, ապա ԴՀ-ի գնահատումն արտացոլում է Ընկերության կարողությունը հավաքել փոփոխված պայմաններով դրամական միջոցները՝ հիմք ընդունելով Ընկերության նախկին փորձը համաներման նմանատիպ գործընթացների պարագայում, ինչպես նաև տարբեր վարքագծային ցուցանիշներ, որոնք են փոխառուի պարտաճանաչ վճարման կարողությունը փոփոխված պայմանագրային պայմանների շրջանակներում: Եթե վարկային ռիսկը շարունակում է մնալ ավելի բարձր, քան ակնկալվում էր սկզբնական ճանաչման ժամանակ, ապա կորուստների գծով պահուստը կրկին չափվելու է ամբողջական ԱՊԿ-ին համարժեք գումարով: Վերանայված պայմաններով ակտիվների կորուստների գծով պահուստը հիմնականում կչափվի՝ հիմք ընդունելով 12-ամսյա ԱՊԿ, երբ առկա է փոխառուի վճարունակության բարելավման վկայություն, ինչը հանգեցնում է նախկինում վարկային ռիսկի նշանակալի աճի նվազեցմանը:
Այն դեպքում, երբ փոփոխությունների արդյունքում ապաճանաչում չի առաջանում, Ընկերությունը հաշվարկում է այդ փոփոխությունների օգուտը/կորուստը՝ համեմատելով համախառն հաշվեկշռային արժեքը փոփոխությունից առաջ և հետո (բացառությամբ ԱՊԿ գծով պահուստի): Այնուհետև Ընկերությունը գնահատում է ԱՊԿ-ն փոփոխված ակտիվի մասով, երբ փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացած ակնկալվող դրամական հոսքերը ընդգրկվում են սկզբնական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների նվազեցման հաշվարկում:
Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (ներառյալ էապես տարբեր պայմանագրային պայմանների փոփոխման արդյունքում առաջացած սպառումը) կամ երբ ֆինանսական ակտիվի և վերջինիս սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են երրորդ կողմի: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:
Ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված և ստացման ենթակա հատուցումների և կուտակային օգուտի/վնասի գումարի տարբերությունը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվել սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային ներդրումային գործիքների, որոնք դասակարգվել են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, երբ կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվը մասնակի ապաճանաչելիս (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Սա չի կիրառվում բաժնային ներդրումային գործիքների մասով, որոնք դասակարգվել են որպես այլ համապարփակ եկամուտի միջոցով իրական արժեքով չափվող, քանի որ կուտակված օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ եկամուտում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Դուրսգրում

Պարտքային գործիքները դուրս են գրվում, երբ Ընկերությունը չունի իրատեսական ակնկալիքներ ֆինանսական ակտիվի վերականգնման մասով (ամբողջական կամ մասնակի): Այս դեպքում Ընկերությունը որոշում է, որ փոխառուն չունի համապատասխան ակտիվներ կամ եկամտի բավարար աղբյուրներ դուրս գրման ենթակա գումարների մարման նպատակով: Դուրսգրումը ներառում է ֆինանսական ակտիվների ապաճանաչում: Ընկերությունը կարող է կիրառել հարկադիր գործողություններ դուրս գրված ֆինանսական ակտիվների մասով: Ընկերության հարկադիր գործունեության արդյունքում հավաքագրված գումարները կառաջացնեն արժեզրկման գծով օգուտ:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում;
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների արժեզրկումից կորուստները չեն հաշվանցվում ֆինանսական ակտիվների համապատասխան հաշվեկշռային արժեքների հետ, փոխարենը դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում: Քանի որ այս ակտիվների հաշվեկշռային արժեքներն իրենց իրական արժեքներն են՝ արժեզրկումից առաջացող փոփոխություններն արդեն իսկ ներառված են այդ արժեքների մեջ: Այնուամենայնիվ, կորուստների գծով պահուստները ներառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքների «Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումներ» հոդվածում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակով կամ դասակարգվում է որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակով կամ դասակարգվում է որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակագրվում է որպես առևտրական նպատակով պահվող, եթե՝

- Այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- Սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- Այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի առևտրական նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններից կամ պայմանական հատուցումից, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից

որպես բիզնեսի միավորման մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե՝

- Նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- Ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՖՀՄՍ 9 ստանդարտը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառում է «իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից զուտ եկամուտ» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում:

Այնուամենայնիվ, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների մասով, երբ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ եկամուտում, եթե այլ համապարփակ եկամտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը չի առաջացնում կամ մեծացնում հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում: Պարտավորության իրական արժեքի փոփոխության մասով մնացած գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ եկամտում ճանաչված ֆինանսական պարտավորության վարկային ռիսկերին վերագրելի իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ փոխանցվում են չբաշխված շահույթ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչելիս:

Այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, արդյոք այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված պարտավորության վարկային ռիսկերի փոփոխությունների ճանաչումը շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանություն է առաջացրել կամ մեծացրել, գնահատում է, արդյոք պարտավորության պարտքային ռիսկերի փոփոխության ազդեցությունը հաշվանցելու է շահույթում կամ վնասում՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոոփխությամբ պայմանավորված: Այս որոշումը իրականացվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները (այդ թվում՝ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի և տոկոսային ծախսի տեղաբաշխման հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ավելի մանրամասն ներկայացված է «Տոկոսային եկամուտներ և տոկոսային ծախսեր» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և

նոր պարտավորության ճանաչում: Նմանապես, Ընկերությունը հաշվի է առնում գոյություն ունեցող պարտավորության պայմանների կամ դրա մի մասի նշանակալի փոփոխությունը որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում:

Ենթադրվում է, որ պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Տոկոսային եկամուտներ և տոկոսային ծախսեր

Ֆինանսական գործիքների մասով տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են «զուտ տոկոսային եկամտում» որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերը գնահատվում են՝ հիմք ընդունելով գործիքի բոլոր պայմանագրային պայմանները:

Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարմանը համապատասխան:

Ռեպո պայմանագրեր

Ռեպո պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ Ռեպո պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: Ռեպո պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Ռեպո պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: Ռեպո պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ:

Ռեպո պայմանագրերով ստացվելիք և/կամ վճարվելիք տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում:

գ) Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են երկարաժամկետ վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների ընթացիկ սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը: Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային և կապի միջոցներ	- 3 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք	- 8 տարի
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	- 2 տարի
Այլ հիմնական միջոցներ	- 8 տարի

դ) Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են:

Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ: Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված ամորտիզացիոն ժամկետների ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված ամորտիզացիոն ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային հաշվապահական ծրագիր - 10 տարի

ե) Վարձակալություն

Ընկերությունը որպես վարձակալ վարձակալության պայմանագրի սկզբնական ճանաչման պահին ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալական պարտավորություն, բացառությամբ ցածրարժեք և կարճաժամկետ վարձակալությունների՝ ՖՀՄՍ 16-ով նախատեսված բացառությունների:

Սկզբնական ճանաչումը

Սկզբնական ճանաչման ամսաթվին Ընկերությունը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնական արժեքով, որը ներառում է հետևյալ տարրերը.

- վարձակալական պարտավորության սկզբնական ճանաչման արժեքը,
- ճանաչման ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալական վճարները, հանած վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանների ազդեցությունը,
- կրած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալած ակտիվի ազատման, վերականգման կամ ապամոնտաժման ծախսերի գնահատականը:

Սկզբնական ճանաչման ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալական պարտավորությունը՝ որպես այդ ամսաթվի դրությամբ վճարման ենթակա վարձակալական վճարների ներկա արժեք: Վարձակալական վճարները զեղչվում են վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, եթե այն հնարավոր է որոշել Ընկերությունը զեղչման համար օգտագործում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբանական արժեքով՝

- հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը
- ճշգրտված վարձակալական պարտավորության վերաչափումով:

Ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության հաշվարկի համար հիմք է հանդիսանում հիմնական միջոցների մաշվածության Ընկերությունը քաղաքականությունը: Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը վերաչափում է վարձակալական պարտավորությունը՝

- մեծացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալական պարտավորության նկատմամբ հաշվեգրվող տոկոսը

- փոքրացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարած վարձակալական վճարները
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության պայմանագրի վերաչափումները կամ փոփոխությունները

զ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են պահանջները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

է) Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով: Շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

ը) Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի բիզնեսի միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերութունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված

հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

թ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

ժ) Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝
ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի և
բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՄՍ 2 «Պաշարներ» և ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտները):
Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝
ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ. և
բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

ի) Հասույթ գնորդների հետ պայմանագրերից

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին: ՖՀՄՍ 15. «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Ընկերությունը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքվեն Ընկերության կողմից:
Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:
Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝
Քայլ 1. նույնացնել գնորդի հետ պայմանագիրը,
Քայլ 2. նույնացնել կատարման ենթակա պարտավորությունները,
Քայլ 3. նույնացնել գործարքի գինը,
Քայլ 4. բաշխել գործարքի գինը կատարման ենթակա պարտավորություններին,
Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ ընկերությունը կատարում է կատարողական պարտավորությունները:

լ) Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և

համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն:

Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել: Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	78	78	60	60
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	28,696	28,696	30,952	30,952

Տոկոսային եկամուտներ փոխառություններից	-	-	-	-
Ընդամենը	28,774	28,774	31,012	31,012

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(45)	(45)	-	-
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(13,655)	(13,655)	(14,504)	(14,504)
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսեր	(251)	(251)	(139)	(139)
Ընդամենը	(13,951)	(13,951)	(14,643)	(14,643)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	14,823	14,823	16,369	16,369

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից	76	76	-	-
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից	1,689	1,689	540	540
Պահառության գործունեությունից	8,028	8,028	1,268	1,268
Այլ միջնորդավճարներ (ֆոնդի կառավարումից)	1,827	1,827	-	-
Ընդամենը	11,620	11,620	1,808	1,808

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Միջնորդավճարների գծով ծախս	(4,738)	(4,738)	(1,060)	(1,060)
Ընդամենը	(4,738)	(4,738)	(1,060)	(1,060)
Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	6,882	6,882	748	748

Ծանոթագրություն 5. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ներդրումներից զուտ եկամուտներ	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ եկամուտ	2,448	2,448	5,303	5,303
Առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-	(10,033)	(10,033)
«Ամորտիզացված արժեքով» հաշվառվող ներդրումներից զուտ եկամուտներ				
Առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-	-	-
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտներ				

Վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(717)	(717)	-	-
Առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	(27)	(27)	(12)	(12)
Ընդամենը	1,704	1,704	(4,742)	(4,742)

Ծանոթագրություն 6. Այլ գործառնական եկամուտ

Այլ գործառնական եկամուտ	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	-	(40)	(40)
Այլ եկամուտներ	1	1	-	-
Ընդամենը	1	1	(40)	(40)

Ծանոթագրություն 7. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների գծով	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Պահուստի սկզբնական մնացորդ	(4,899)	(4,899)	(5,123)	(5,123)
Պահուստին կատարված մասհանումներ	(1,718)	(1,718)	-	-
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	-	-	2,924	2,924
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(1,718)	(1,718)	2,924	2,924
Պահուստի վերջնական մնացորդ	(6,617)	(6,617)	(2,199)	(2,199)

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Պահուստի սկզբնական մնացորդ	(715)	(715)	(1,922)	(1,922)
Պահուստին կատարված մասհանումներ	(19)	(19)	(50)	(50)
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	-	-	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(19)	(19)	(50)	(50)
Պահուստի վերջնական մնացորդ	(734)	(734)	(1,972)	(1,972)

Ծանոթագրություն 8. Ընդհանուր վարչական ծախսեր

Ընդհանուր վարչական ծախսեր	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(7,567)	(7,567)	(8,061)	(8,061)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(1,050)	(1,050)	(1,500)	(1,500)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(444)	(444)	(565)	(565)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(237)	(237)	(209)	(209)
Հիմնական միջոցներ տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(34)	(34)	(30)	(30)
Ներկայացուցչական ծախսեր	(211)	(211)	(58)	(58)

Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	(608)	(608)	(614)	(614)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(301)	(301)	(670)	(670)
Այլ վարչական ծախսեր	(313)	(313)	(244)	(244)
Ընդամենը	**(10,765)**	**(10,765)**	**(11,951)**	**(11,951)**

2021թ. 1-ին եռամսյակում աշխատակիցների միջին թվաքանակը եղել է 7 (համադրելի միջանկյալ ժամանակահատվածում՝ 5), իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը՝ 345 հազ. ՀՀ դրամ (համադրելի միջանկյալ ժամանակահատվածում՝ 390 հազ. ՀՀ դրամ):

Ծանոթագրություն 9. Այլ գործառնական ծախսեր

Այլ գործառնական ծախսեր	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(2,281)	(2,281)	(1,590)	(1,590)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(7)	(7)	(7)	(7)
Այլ ծախսեր	-	-	-	-
Ընդամենը	**(2,288)**	**(2,288)**	**(1,597)**	**(1,597)**

Ծանոթագրություն 10. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

Շահութահարկի գծով ծախս	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)	(1,717)	(1,717)	(8,437)	(8,437)
Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	300	300	407	407
Ընդամենը	**(1,417)**	**(1,417)**	**(8,030)**	**(8,030)**

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	01.01.21-31.03.21	Արդյունավետ դրույքաչափ %	01.01.20-31.03.20	Արդյունավետ դրույքաչափ %
Շահույթը (վնասը) մինչև հարկումը	8,620		1,661	
Շահութահարկ՝ դրույքաչափով	1,552	18.00	299	18.00
Չհարկվող եկամուտներ	(701)	(8.13)	(5,650)	340.16
Չնվազեցվող ծախսեր	543	6.30	(2,703)	(162.73)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	1,394	16.18	(8,054)	(484.89)

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդն առ 31.12.2020 դրությամբ	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդն առ 31.03.2021 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	**3,335**	**-**	**30**	**3,365**
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Վարձակալական պարտավորությունների գծով	1,992	-	(251)	1,741
Ստեղծված պահուստների գծով	1,343	-	281	1,624
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	**(995)**	**-**	**270**	**(2,514)**

«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների գծով	1,055	(1,789)	-	(734)
Հիմնական միջոցների գծով	(68)	-	-	(68)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով	(1,982)	-	270	(1,712)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	**2,340**	**(1,789)**	**300**	**851**
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս	-	-	-	-
Ընդամենը զուտ հետաձգված հարկային ակտիվի/(պարտավորության) շարժը	**2,340**	**(1,789)**	**300**	**851**

Ծանոթագրություն 11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Սույն ծանոթագրությունում բացահայտված է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման (հաշվարկման բանաձևերում որպես համարիչ և հայտարար օգտագործվող գումարների) վերաբերյալ տեղեկատվությունը:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս) հարկումից հետո	7,203	7,203	(6,369)	(6,369)
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	7,203	7,203	(6,369)	(6,369)
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	39,584	39,584	39,584	39,584
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)	0.182	0.182	(0.161)	(0.161)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)	0.182	0.182	(0.161)	(0.161)

Ծանոթագրություն 12. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

		առ 31.03.2021	առ 31.12.2020
Ընթացիկ հաշիվներ			
Հայաստանի Հանրապետության բանկերում		41,222	26,831
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		**41,222**	**26,831**

Սույն հաշվետվություններում ներկայացված դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով օգտագործման որևէ սահմանափակում առկա չէ:

Ծանոթագրություն 13. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

Պահանջներ հաճախորդների նկատմամբ	առ 31.03.2021	առ 31.12.2020
Արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումարներ	7,968	2,228
Արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարներ	99	23
Խորհրդատվական ծառայությունների գծով ստացվելիք գումարներ	480	1,080
Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ	804	307
Այլ	-	-

Ընդամենը զուտ պահանջներ	9,351	3,638

Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջում Ընկերությունը ժամկետանց և խնդրահարույց տրամադրած փոխառություններ չի ունեցել:
Ընկերությունը չունի նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ստացված և տեղաբաշխված միջոցներ:

Հաճախորդների նկատմամբ պահանջների աշխարհագրական վերլուծություն

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ ռեզիդենտության	առ 31.03.2021	%	առ 31.12.2020	%
Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ	4,314	46	3,638	97
ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ	5,037	54	106	3
Ընդամենը	9,351	100	3,744	100

Ծանոթագրություն 14. «Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	առ 31.03.2021	առ 31.12.2020
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
Գանձապետական պարտատոմսեր	894,247	565,669
Ընդամենը պետական արժեթղթեր	894,247	565,669
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված	838,865	564,882
ՀՀ ոչ պետական արժեթղթեր, այդ թվում՝	*Ցուցակված*	*Ցուցակված*
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի		
Պարտքային գործիքներ	429,187	408,241
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	429,187	408,241

Ծանոթագրություն 15. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	առ 31.03.2021	առ 31.12.2020
ՀՀ պետական պարտատոմսեր, այդ թվում՝		
գանձապետական պարտատոմսեր	146,793	143,074
Ընդամենը պետական արժեթղթեր	146,793	143,074
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված	146,793	143,074
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումների արժեզրկում (հնարավոր կորուստների պահուստ) (ծանոթագրություն 7)	(734)	(715)
Զուտ ներդրումներ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներում	146,059	142,359

Ծանոթագրություն 16. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ	առ 31.03.2021	առ 31.12.2020
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում	1,000	-
Ավելացում	-	1,000
Օտարում (վաճառք)	-	-
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում, այդ թվում՝	1,000	1,000
Դուստր ընկերությունում ներդրումներ	1,000	-

Դուստր ընկերության վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն տես ստորև.

Անձի անվանումը	Հիմնական գործու-նեությունը	Գրանցման երկիր	Ներդրման ամսաթիվ	Ներդրումը (հազար դրամ)	Բաժնեմասը %
Դայմենշն Ֆանդզ Մենեջմենթ ՍՊԸ	Ֆոնդերի կառավարում	ՀՀ	19 փետրվարի 2020թ.	1,000	100

Ծանոթագրություն 17. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Համակ. և կապի միջոցներ	Վարձակալված ՀՍ-ներում կապիտալ ներդրումներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 01.01.2020	6,211	1,585	9,455	2,625	19,876
Ավելացում	97	1,306	11,993	492	13,888
Օտարում	(319)	(1,585)	(9,455)	-	(11,359)
Մնացորդը առ 31.12.2020	5,989	1,306	11,993	3,117	22,405
Ավելացում	248	-	-	265	513
Օտարում	-	-	-	-	-
Մնացորդը առ 31.03.2021	6,237	1,306	11,993	3,382	22,918
Կուտակված մաշվածություն					
Մնացորդը առ 01.01.2020	2,202	239	3,782	371	6,594
Ավելացում	1,998	94	982	334	3,408
Օտարում	(71)	(239)	(3,782)	-	(4,092)
Մնացորդը առ 31.12.2020	4,129	94	982	705	5,910
Ավելացում	517	164	1,499	100	2,280
Օտարում	-	-	-	-	-
Մնացորդը առ 31.03.2021	4,646	258	2,481	805	8,190
Զուտ հաշվեկշռային արժեք					
առ 31.03.2021	1,591	1,048	9,512	2,577	14,728
առ 31.12.2020	1,860	1,212	11,011	2,412	16,495

Ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Մնացորդը առ 01.01.2020	298	298

Ավելացում	-	-
Մնացորդը առ 31.12.2020	298	298
Ավելացում	-	-
Մնացորդը առ 31.03.2021	298	298
Կուտակված ամորտիզացիա		
Մնացորդը առ 01.01.2020	10	10
Ավելացում	30	30
Մնացորդը առ 31.12.2020	40	40
Ավելացում	7	7
Մնացորդը առ 31.03.2021	47	47
Զուտ հաշվեկշռային արժեք		
առ 31.03.2021	251	251
առ 31.12.2020	258	258

Ծանոթագրություն 18. Այլ ակտիվներ

Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	առ 31.03.2021	առ 31.12.2020
Դեբիտորական պարքեր բյուջեի գծով	-	-
Կանխավճարներ մատակարարներին	480	-
Կանխավճարներ շահութահարկի գծով	666	-
Ընդամենը	1,146	-
Այլ ակտիվներ	-	-
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	272	375
Այլ ակտիվներ	-	-
Ընդամենը	1,418	375

Ծանոթագրություն 19. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	առ 31.03.2021	առ 31.12.2020
ՀՀ բանկեր		
Ռեպո համաձայնագրեր	989,743	635,393
Հաշվեգրված տոկոսներ	1,124	328
Ընդամենը	990,867	635,721

Ծանոթագրություն 20. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	առ 31.03.2021	առ 31.12.2020
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	488	275
Ընդամենը	488	275

Ծանոթագրություն 21. Պահուստներ

Պահուստներ	առ 31.03.2021	առ 31.12.2020
Սկզբնական մնացորդ	1,917	1,067

Պահուստին կատարված մասհանումներ	426	2,428
Պահուստի օգտագործում	(581)	(1,578)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(155)	850
Վերջնական մնացորդ	**1,762**	**1,917**
Արձակուրդայինի գծով	1,762	1,917

Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և ներկայացվածից բացի պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 22. Այլ պարտավորություններ

Այլ պարտավորություններ	առ 31.03.2021	առ 31.12.2020
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝		
Շահութահարկի գծով	17,636	15,901
Ավելացված արժեքի հարկի գծով	39	3
Եկամտային հարկի գծով	655	-
Դրոշմանիշային վճարների գծով	46	-
Պարտադիր կենսաթոշակային վճարների գծով	126	-
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով	150	-
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	1,048	3,545
Պարտավորություններ վարձակալության գծով	9,669	11,068
Ընդամենը	**29,369**	**30,517**

Ծանոթագրություն 23. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 395,840 հազ. ՀՀ դրամ է, որը բաղկացած է 39,584 հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերից, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են: Հաշվետու ժամանակահատվածում Ընկերության կանոնադրական կապիտալում փոփոխություններ չեն կատարվել: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից շահութաբաժիններ չեն հայտարարվել և վճարվել: Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ներդրումային ընկերության նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները տես ստորև.

Նշանակալից մասնակցի անունը, ազգանունը	Մասնակցության գումարը	Մասնակցության չափը %
Դավիթ Հակոբյան	285,000	71.998787
Կարել Խրիս Հոֆստրա	79,120	19.987874

Ծանոթագրություն 24. Սեփական կապիտալի այլ տարրեր

	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21	01.01.20-31.03.20	01.01.20-31.03.20
Սկզբնական մնացորդ	**1,437**	**1,437**	**70,767**	**70,767**
«Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների վերագնահատումներ, այդ թվում՝				
Իրական արժեքի փոփոխություններից	9,920	9,920	1,524	1,524
Արժեզրկման կորստի պահուստի փոփոխություններից	1,718	1,718	(2,924)	(2,924)

Այլ համապարփակ արդյունքին վերագրվող շահութահարկ	(1,790)	(1,790)	11,640	11,640
Նախորդ ժամանակաշրջանի վերագնահատման վերադասակարգում շահույթին կամ վնասին	45	45	(57,836)	(57,836)
Ընթացիկ ժամանակաշրջանի վերագնահատման վերադասակարգում շահույթին կամ վնասին	(28)	(28)	-	-
Վերջնական մնացորդ	**11,302**	**11,302**	**23,171**	**23,171**

Ծանոթագրություն 25. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են նրա՝ գլխավոր տնօրենը, բաժնետերերը, դուստր կազմակերպությունը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք: Ինչպես նշվել է Ծանոթագրություն 23-ում Ընկերության բաժնետոմսերի մոտ 72 տոկոսը պատկանում է Դավիթ Հակոբյանին, ով հանդիսանում է վերջնական հսկող: Ընկերության՝ կապակցված կողմերի հետ գործարքներն իրականացվել են շուկայում գործող պայմաններին և տոկոսադրույքներին համապատասխան: Հաշվետու և համադրելի եռամսյակներում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները.

	31/03/2021			
	Հաշվետու եռամսյակ		Համադրելի եռամսյակ	
	Գործարքի գումար	Չմարված մնացորդ	Գործարքի գումար	Չմարված մնացորդ
Պահառության գործունեություն, այդ թվում՝	155	474	2	4
Դուստր ընկերության կողմից կառավարվող ֆոնդ	153	470	-	-
Բաժնետերեր	2	4	2	4
Արժեթղթերով գործարքների կատարում, այդ թվում՝	76	99	-	-
Դուստր ընկերության կողմից կառավարվող ֆոնդ	76	99	-	-
Հատուցումներ առանցքային կառավարչական անձնակազմին, այդ թվում՝	7,246	-	4,650	-
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	7,246	-	4,650	-

Ծանոթագրություն 26. Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ

26.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով Ընկերությունը կկրի ֆինանսական կորուստներ: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները:Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

Աշխարհագրական կենտրոնացումներ

2021 թվականի մարտի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ	-	-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	41,222	-	41,222
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	9,351	-	9,351
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	1,323,434	-	1,323,434
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	146,059	-	146,059
Այլ ակտիվներ	1,418	-	1,418

Ընդամենը ակտիվներ	1,521,484	-	1,521,484
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	990,867	-	990,867
Այլ պարտավորություններ	29,857	-	29,857
Ընդամենը պարտավորություններ	1,020,724	-	1,020,724
Զուտ դիրք	500,760	-	500,760

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ	-	-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	26,831	-	26,831
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	3,638	-	3,638
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	973,910	-	973,910
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	142,359	-	142,359
Այլ ակտիվներ	375	-	375
Ընդամենը ակտիվներ	1,147,113	-	1,147,113
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	635,720	-	635,720
Այլ պարտավորություններ	30,792	-	30,792
Ընդամենը պարտավորություններ	666,512	-	666,512
Զուտ դիրք	480,601	-	480,601

26.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ Ընկերությունը կկրի վնասներ: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը:

26.3 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

2021 թվականի մարտի 31-ի դրությամբ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,469	31,753	41,222
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	9,351	-	9,351
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	1,196,099	127,335	1,323,434
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	146,059	-	146,059
Այլ ակտիվներ	1,418	-	1,418

Ընդամենը ակտիվներ	1,362,396	159,088	1,521,484
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	942,378	48,489	990,867
Այլ պարտավորություններ	29,857	-	29,857
Ընդամենը պարտավորություններ	972,235	48,489	1,020,724
Զուտ դիրք	390,161	110,599	500,760

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,785	21,670	26,831
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	(89,148)	-	3,638
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	973,910	92,359	973,910
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	142,359	-	142,359
Այլ ակտիվներ	1,375	-	375
Ընդամենը ակտիվներ	1,032,281	114,029	1,147,113
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	635,720	-	635,720
Այլ պարտավորություններ	-	-	30,792
Ընդամենը պարտավորություններ	635,720	-	666,512
Զուտ դիրք	396,561	114,029	480,601

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ արտարժութային ածանցյալ գործիքներ առկա չեն:

26.4.Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

2021 թվականի մարտի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1 տարուց ավելի	
	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով
Տեղաբաշխված միջոցներ										
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում										
Հաճախորդների նկատմամբ պահանջներ										
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	-	54,353	-	34,169	-	-	18,758	27,020	1,167,269	21,865
Ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր									146,059	
Տեղաբաշխված այլ միջոցներ										
Ընդամենը	-	54,353	-	34,169	-	-	18,758	27,020	1,313,328	21,865
Պարտավորություններ										
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
ռեպո համաձայնագրեր	990,867									
այլ										
Վարձակալական պարտավորություններ										
Ներգրավված այլ միջոցներ										
Ընդամենը	990,867									
Զուտ դիրք	(990,867)	54,353	-	34,169	-	-	18,758	27,020	1,313,328	21,865

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		5 տարուց ավելի	
	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով	դրամով	արտար-ժույթով
Տեղաբաշխված միջոցներ										
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում										
Հաճախորդների նկատմամբ պահանջներ										
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ		91,953	53,000		10,000		18000		761,100	
Ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր									142,359	
Տեղաբաշխված այլ միջոցներ										
Ընդամենը	-	91,953	53,000	-	10,000	-	18,000	-	903,459	-
Պարտավորություններ										
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝										
ռեպո համաձայնագրեր	1,060,648									
այլ										
Վարձակալական պարտավորություններ										
Ներգրավված այլ միջոցներ										
Ընդամենը	1,060,648									
Զուտ դիրք	(1,060,648)				10,000				903,459	-

Տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքներ.

Հոդվածի անվանումը	Հաշվեու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	*Արտարժույթ*	*ՀՀ դրամ*	*Արտարժույթ*
	%	*%*	*%*	*%*
Ակտիվներ				
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	9.66	5.44	9.5	6
Ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր	13	-	13	
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6.51	3	6	

26.5 Գնային ռիսկ

Գնային ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով: Արդյունքում, գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

26.6 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ Ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս:

Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ: Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

2021 թվականի մարտի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝							
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում	41,222						
Հաճախորդների նկատմամբ պահանջներ							
Արժեթղթեր, այդ թվում՝							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	54,353	34,169	-	45,778	1,189,134	-	1,323,434
Ամորտիզացված արժեքով չափվող	-	-	-	-	146,059	-	146,059
Այլ պահանջներ							-
Պայմանագրային պահանջներ**	*96,930*	*37,296*	*8,214*	*102,480*	*2,005,287*	-	2,250,207
Ընդամենը	*192,505*	*71,465*	*8,214*	*148,258*	*3,340,480*	-	*3,719,700*

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	990,867						990,867
Ռեպո համաձայնագրեր							
Այլ պարտավորություններ							
Պայմանագրային պարտավորություններ***	2,500						2,500
Ընդամենը	993,367						993,367

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝							
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում	26,831						
Հաճախորդների նկատմամբ պահանջներ							
Արժեթղթեր, այդ թվում՝							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	91,453	53,000	10,000	18,000	761,100		761,100
Ամորտիզացված արժեքով չափվող					120,000		120,000
Այլ պահանջներ							-
Պայմանագրային պահանջներ**	*2,388*	*8,249*	*38,770*	*45,064*	*555,720*		650,191
Ընդամենը	*120,672*	*61,249*	*48,770*	*63,064*	*1,436,820*	-	*1,531,291*

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝	-						-
Ռեպո համաձայնագրեր	635,721						
Այլ պարտավորություններ							
Պայմանագրային պարտավորություններ***	1,691						1,691
Ընդամենը	637,412						637,412

Պայմանագրային պահանջներ տողում լրացված են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտացոլված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Պայմանագրային պարտավորություններ տողում լրացված են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Ծանոթագրություն 27. Կապիտալ և կապիտալի համարժեքություն

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով Ընկերության շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Ընկերությունն ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից:

	31/03/2021	31/12/2020
Կանոնադրական կապիտալ	395,840	395,840
Էմիսիոն եկամուտ	8,346	8,346
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	7,158	87,354
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս)	91,942	4,019
Հայտարարված շահաբաժիններ	-	-
Գլխավոր պահուստ	212	212
Կապիտալի այլ տարրեր	11,302	1,436
Ընդամենը	**514,800**	**497,207**

Հաշվետու ժամանակաշրջանի կապիտալի համարժեքություն

Ամիսը	Հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող	Նորմատիվային հաշվարկին մասնակցող հիմնական կապիտալ	ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն մեծությունը
Հունվար	370,286	439,532	1,345	438,186	300,000
Փետրվար	371,002	464,625	1,328	463,296	300,000
Մարտ	403,160	451,685	1,312	450,372	300,000

Նախորդ ժամանակաշրջանի կապիտալի համարժեքություն

Ամիսը	Հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող	Նորմատիվային հաշվարկին մասնակցող հիմնական կապիտալ	ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն մեծությունը
Հունվար	321,250	318,495	1,543	316,952	300,000
Փետրվար	321,000	315,966	1,526	314,440	300,000
Մարտ	351,715	351,140	1,510	349,630	300,000

Ծանոթագրություն 28. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

• 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

• 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն

(այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
• 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկան:
Երբ կիրառվում է զեղչված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են ղեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:

Ծանոթագրություն 29. Գրավադրված ակտիվներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավադրված ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 30. Ընդունված գրավ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:

Ծանոթագրություն 31. Պարտավորությունների չկատարում/խախտում

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել:

«Դայմենշն» ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված եռամսյակի գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝
• Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,

• Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,

• Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին,

• Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

• Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,

• Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՄ-ներին,

• ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման վարումը կազմակերպելու համար,

• Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,

• Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար։

Միքայել Մարգարյան	Արմեն Ազիզյան
Գլխավոր տնօրեն	«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

14 ապրիլ 2021թ.

«Դայմենշն» ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Սույնով հայտարարում ենք, որ պատասխանատվություն ենք կրում.

I. Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝
ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

II. Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման վերաբերյալ,

III. Ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Հավաստիացնում ենք, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Միքայել Մարգարյան	Արմեն Ազիզյան
Գլխավոր տնօրեն	«ՍթեփԱփ» ՍՊԸ ներկայացուցիչ

14 ապրիլ 2021թ.